ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTIC SUPPORT DEPARTMENT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
Էլ. փոստ՝ spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс. (+37410) 29-46-13

№ ՅՖԱՄ/1478

«26» 06 2015թ.

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**
**պարոն Հ. ԹՈՒՆՅԱՆԻՆ**

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Շտեմարանների» գնման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-6/3» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած մոնիթորինգի արդյունքում http://www.gnumner.am կայքում 25.06.2015թ. հրապարակված բացասական եզրակացույթանն ի պատասխան՝ հայտնում եմ, որ վերը նշված ընթացակարգի հրավերով նախատեսված հայտերի ներկայացման վերջնաժամկետը իրականում համապատասխանում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 83-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին: Մասնավորապես, ըստ նշված ենթակետի՝ «*հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում*», այսինքն, մասնակիցը հայտը ներկայացնելու համար պետք է ունենա ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ ամբողջական աշխատանքային օր, ուստի և, եթե հրավերով և հայտարարությամբ որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանվի «մինչև հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող «7»-րդ

աշխատանքային օրվա ժամը $10^{00}$»-ն, ապա կստացվի, որ մասնակիցը կզրկվի 7-րդ աշխատանքային օրվա ժամը $10^{00}$-ից մինչև օրվա վերջ ընկած ժամանակահատվածում հայտ ներկայացնելու հնարավորությունից, այդ իսկ պատճառով էլ հրավերով սահմանվել է, որ «Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային *ձևով՝ էլեկպրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի (այսուհեփ նաև՝ Համակարգ) միջոցով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող «8»-րդ աշխափանքային օրվա ժամը «$10^{00}$»-ն»:*

Հարկ է նկատել, որ սույն խնդիրն առաջացավ նաև 2013թ. և հարցի լուծման նպատակով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից շրջանառության մեջ դրվեց պարզաբանում(կցվում է), որով նախատեսված հաշվարկման կարգից երևում է, որ հայտերի բացման վերջնաժամկետը համընկնում է հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող «8»-րդ աշխատանքային օրվա սահմանված ժամին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-6/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Առդիր՝ 1 թերթ:

**Հարգանքով՝**

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ՆՏԱ**

**ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ** **Ա.ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minister@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

01.10.2013թ. № 1/13.2/14495-13

Ձեր №

ՀՀ պետական կառավարման մարմիններին
(ըստ ցանկի)
Երևանի քաղաքապետարանին

<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով: Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 109-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ Կարգի 109-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված յոթ աշխատանքային օրյա ժամանակահատվածի հաշվարկը պետք է սկսել տվյալ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից՝ հաշվարկի մեջ չներառելով ծանուցմանը հաջորդող օրը (օրինակ 1. ծանուցման օրը 09.09.2013թ. է, ծանուցմանը հաջորդող աշխատանքային օրը 10.09.2013թ. է, որին հաջորդող առաջին աշխատանքային օրվանից՝ այն է սեպտեմբերի 11-ից, պետք է սկսվի յոթ աշխատանքային օրյա ժամանակահատվածի հաշվարկը; օրինակ 2. ծանուցման օրը 13.09.2013թ. է, ծանուցմանը հաջորդող աշխատանքային օրը 16.09.2013թ. է, որին հաջորդող առաջին աշխատանքային օրվանից՝ այն է սեպտեմբերի 17-ից, պետք է սկսվի յոթ աշխատանքային օրյա ժամանակահատվածի հաշվարկը:)

Հայտնում ենք նաև, որ անհրաժեշտ է նույն տրամաբանությամբ առաջնորդվել նաև մյուս մրցակցային ընթացակարգերի կիրառման դեպքում:

Միաժամանակ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել.

ա/ ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգում գործող պատվիրատու հանդիսացող կազմակերպություններին.

բ/ ՀՀ մարզպետներին՝ մարզերի վարչական սահմաններում գտնվող տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հարգանքով՝ Դավիթ Սարգսյան

Կատ. ՊՆՖՀ և ՊԳ մեթոդաբանության վարչություն
Հեռ. 595 319, 595 322